Շաբաթաթերթ «Krtutiun» (education) weekly «Кртутюн» (образование) еженедельник 24.08.2022թ. չորեքշաբթի թիվ 31-32 (1056-1057)

# Օգոստոսյան

Ամառն անցավ: Մի քանի օրից կհնչի դպրոցական *Առաջին զանգը*: **Սեպտեմբերի 1**-ը կտոնենք՝ որպես **Գիտելիքի օր**: Երկրի ղեկավարները կայցելեն կրթօջախներ: *Առաջին դասը* կվարեն ՀՀ ԿԳՄՍ նախարարը, գերատեսչական այլ ղեկավարներ, գրողներ, գիտնականներ, արվեստագետներ... Աշնան առաջին օրը կխորհրդանշի բերքի, գիտելիքի առատություն, կդառնա աշխատանքի, նոր գործերի հրավեր...

Դրանից առաջ արդեն մեկնարկել են *ուսուցիչների օգոստոսյան ավանդական խորհրդակցությունները*: Դրանց, իհարկե, կանդրադառնանք մեր ե՛ւ այս, ե՛ւ առաջիկա համարներում, բայց մինչ այդ երկրի հազարավոր մանկավարժների համախոսքին գումարենք մի պարզ նկատառում:

Ահա արդեն տասնամյակներ խոսում ենք կրթական համակարգի բարեփոխումների մասին: Անշուշտ, նոր հասարակության կառուցման պատմական անհրաժեշտությունն էր, որ թելադրեց ձեռնարկել դրանց իրագործումը: Բոլոնիայի գործընթացին միանալը, բարձրագույն կրթության ոլորտում անցումը եռաստիճան համակարգի, հանրակրթության անցումը տասներկուամյա ուսուցման, ապա կրեդիտային համակարգի, գնահատման եւ քննական նոր համակարգերի ներդրումը եւ այլ նորամուծություններ մեզանում եվրոպական չափորոշիչներ եւ չափանիշներ ամրագրելու, եվրոպական միասնական կրթական տարածք մուտք գործելու նպատակներն են հետապնդում: Իհարկե, ի վերջո, գերխնդիրը մնում է կրթության կազմակերպման առավել կատարյալ ձեւերի եւ եղանակների մշակումն ու կիրառումը եւ դրանցով ուսուցման բարձր **որակ** ապահովելը:

Գերխնդրին հետամուտ՝ աշխարհի փորձն ուսումնասիրելը եւ եղած լավագույնը տեղայնացնելը, թեեւ կարեւոր, բայց չի կարող լինել վերջնական, լիարժեք եւ կամ միակ բավարար ձեռնարկումը: **Սեփական** մանկավարժության պատմությունը, փորձը մանրակրկիտ ուսումնասիրելը, վերլուծելը, նորացնելը, կարծում ենք, նույնքան, գուցեեւ ավելի կարեւոր է. ինչը վերջին ժամանակներում կարծես թե մոռացել ենք: Մի՞թե մեր դարավոր դպրության տարեգրության մեջ մնայուն եւ բոլոր ժամանակների համար ընդօրինակելի էջերը քիչ են: Չէ՞ որ կրթության ոլորտում, ընդհանրապես մանկավարժության բնագավառում կան պատմականորեն հիմնավորված մնայուն սկզբունքներ, որոնց ձեւավորման գործում փոքր չէ հայկական ներդրումը:

Մանրամասնելու խնդիր չդնենք մեր առաջ. ավելացնենք միայն, որ բարդ-բարդ բաներ մտածելուց կամ ուրիշներին պատճենելուց առաջ չմոռանանք, որ այսօր էլ մեզանում կա մասնագիտական հզոր ներուժ, որն ի զորու է ինքը հարստացնել աշխարհի մանկավարժական գանձարանը... Ինչպես դարեր առաջ Անանիա Շիրակացին: Հետո՛ հնչ, որ աշխարհը Կոպեռնիկոսին կամ Բրունոյին է ճանաչում: Մենք հո՛ գիտենք մեր իրական արժեքը: Փորձենք այն մշտապես ճանաչելի եւ գնահատելի դարձնել գոնե մեզ համար: Հետո արդեն՝ նաեւ աշխարհի:

***Գ.Մ.***



Աշխարհի հետ

## Պետության կայացման հիմքը կրթությունն է

ՀՀ ԿԳՄՍ նախարար **Վահրամ Դումանյանը** ԵՊՀ-ում մասնակցել է Կրթական հետազոտությունների եվրոպական ասոցիացիայի (EERA) *«Կրթությունը աշխարհում. գլոբալ իրողությունների ազդեցությունը կրթական հետազոտությունների հեռանկարների եւ փորձի վրա»* թեմայով ամենամյա համաժողովի (ECER 2022) պաշտոնական մեկնարկին:

Միջոցառմանը ներկա էին ԵՊՀ ռեկտոր **Հովհաննես Հովհաննիսյանը,** EERA-ի նախագահ **Զո Օ'Հարան,** ECER 2022 համաժողովի աշխատանքային խմբի ղեկավար, ԵՊՀ մանկավարժության եւ կրթության զարգացման կենտրոնի տնօրեն **Նազիկ Հարությունյանը,** համաժողովի համակարգող եւ EERA-ի հայաստանյան ներկայացուցիչ **Աննա Ալեքսանյանը**:

***շարունակությունը՝ էջ 3***

Համակարգ

## Կշարունակվի նոր չափորոշչի փորձարկումը

Տավուշի մարզկենտրոն Իջեւանում հրավիրված քննարկմամբ մեկնարկել են ավանդական օգոստոսյան խորհրդակցությունները՝ հանրակրթական դպրոցների, նախադպրոցական հաստատությունների տնօրենների, փոխտնօրենների մասնակցությամբ:

Իջեւանյան հանդիպմանը մասնակցել են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ **Ժաննա Անդրեասյանը,** Տավուշի մարզպետի տեղակալ **Նարեկ Դուշչյանը,** ԿԳՄՍՆ հանրակրթության վարչության պետ **Արսեն Բաղդասարյանը,** հանրակրթության եւ արտադպրոցական ծրագրերի բաժնի պետ **Սուսաննա Ազատյանը,** ԿԶՆԱԿ-ի տնօրեն **Արտաշես Թորոսյանը**:

***շարունակությունը՝ էջ 2***

Համահայկական

## Ավանդական կրթական խորհրդաժողովում

Աղվերանում անցկացվեց Համահայկական կրթական 10-րդ խորհրդաժողովը, որը միավորել է Սփյուռքի հայկական կրթօջախների ներկայացուցիչներին՝ բարձրաձայնելու կրթական ոլորտում հայապահպանության արդի խնդիրներն ու դրանց լուծման ճանապարհները:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը Համահայկական կրթական խորհրդաժողովներ կազմակերպում է երկու տարվա պարբերականությամբ: Միջոցառմանը մասնակցում են Սփյուռքի համայնքներում ազգային կրթության եւ դաստիարակության խնդիրներով զբաղվող մարմինների, կազմակերպությունների, հաստատությունների ներկայացուցիչներ՝ ի դեմս թեմական կրթական խորհուրդների, համայնքների ներկայացուցիչների, կրթօջախների հոգաբարձուների, տնօրենների, ուսուցիչների: Այս տարվա խորհրդաժողովին մասնակցում են 21 երկրի կրթական ոլորտի շուրջ 90 ներկայացուցիչներ:

Երկամյա պարբերականությամբ Հայաստանում անցկացվող խորհրդաժողովների նպատակն է քննարկել արտերկրում հայկական կրթօջախների առկա հիմնահարցերը, հստակեցնել կրթության ոլորտում ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից իրականացվող ծրագրերը եւ համագործակցության հաջորդական քայլերը:

***շարունակությունը՝ էջ 4***

# Կշարունակվի նոր չափորոշչի փորձարկումը

*սկիզբը՝ էջ 1*

### Աղետների եւ ռիսկերի կրթության կարեւորության մասին

Խորհրդակցության սկզբում ներկաները 1 րոպե լռությամբ հարգել են Երեւանի պահածոների գործարանի տարածքում տեղի ունեցած պայթյունի հետեւանքով զոհված քաղաքացիների հիշատակը:

Ելույթի խոսքում Ժաննա Անդրեասյանն անդրադարձել է աղետների եւ ռիսկերի կրթությանը՝ ընդգծելով, որ պետք է մեծ ուշադրություն դարձնել անվտանգության կանոնների ուսուցմանը: Նրա տեղեկացմամբ՝ ԿԳՄՍ նախարարությունն այժմ այս ուղղությամբ համագործակցում է Արտակարգ իրավիճակների նախարարության եւ Ճանապարհային ոստիկանության հետ՝ նոր կազմվող դասագրքերում եւ ուսումնական նյութերում անվտանգության կանոններ, տեխնածին եւ բնածին աղետներին առնչվող խնդիրներ, վարժություններ եւ օրինակներ ընդգրկելու ու ուսուցման արդյունավետությունը նաեւ միջառարկայական կապերի միջոցով բարելավելու նպատակով:

### Նոր չափորոշչի ներդրման մասին

Տավուշի մարզի դպրոցների տնօրեններին ուղղված խոսքում Ժաննա Անդրեասյանը կարեւորել է հանրակրթության նոր չափորոշչի փորձարկումը, որը մարզի դպրոցներում կատարվում է անցյալ ուսումնական տարվանից սկսած եւ շարունակվելու է այս տարի:

*«Մենք լինելու ենք ձեր կողքին եւ շարունակելու ենք այս կարեւոր ու պատասխանատու գործը՝ նոր ուսումնական տարում հանրակրթության նոր չափորոշիչը ներդնելով Տավուշի մարզի դպրոցների 3-րդ, 6-րդ, 8-րդ, 11-րդ դասարաններում: Անցյալ տարի չափորոշիչները փորձարկվել են 2-րդ, 5-րդ, 7-րդ եւ 10-րդ դասարաններում: Գալիք տարի փորձարկումը կշարունակվի եւ կներդրվի բոլոր 12 դասարաններում: Հաշվի առնելով ձեր կատարած աշխատանքի փորձարկման արդյունքները՝ չափորոշիչները կլրամշակվեն եւ 2023 թվականի սեպտեմբերից փուլային կարգով կներդրվեն հանրապետության բոլոր դպրոցներում»,*- նշել է նախարարի տեղակալը՝ հավելելով, որ նախորդ տարվա արդյունքները գոհացուցիչ են: Նրա խոսքով՝ կա տեսանելի փոփոխություն՝ նախորդ տարվա սեպտեմբերի եւ ուսումնական տարվա վերջի համեմատությամբ:

*«Ուսուցիչներն ավելի լավ են կիրառում ուսումնական նոր գործիքներն ու մեթոդները, դպրոցներն ավելի լավ են պատկերացնում իրենց առջեւ դրված նոր պահանջները»,*- նշել է նախարարի տեղակալը՝ շեշտելով, որ կան նաեւ բազմաթիվ խնդիրներ, որոնք լուծում են պահանջում:

Այս տարի նախատեսվում է իրականացնել նաեւ նոր դասագրքերի մրցույթը, իսկ դասագրքերը դպրոցներին կտրամադրվեն արդեն գալիք տարվանից:

Ժաննա Անդրեասյանը նշել է, որ Տավուշի մարզում փորձարկվող դասարանների համար դպրոցների ֆինանսավորումը նախատեսված է նոր չափորոշչով նախատեսված չափանիշներով: Տավուշի դպրոցները ֆինանսավորում են ստանում նաեւ նախագծային ուսուցման եւ խմբակների՝ ավագ դասարաններում ընտրովի առարկաների համար, ինչպես նաեւ մնացած դասարաններում դասավանդող մանկավարժների վարձատրությունը հաշվարկվում է ավելի ցածր ծանրաբեռնվածությամբ տարիֆիկացմամբ, որը եւս նախատեսված է հանրակրթության նոր չափորոշչով:

Ըստ դպրոցների ֆինանսավորման նոր բանաձեւի՝ առանձին միջոցներ են նախատեսված նաեւ բնագիտական լաբորատորիաների պահպանման եւ գործարկման համար: Փոխնախարարը շեշտել է, որ այս նպատակով հատկացված ֆինանսավորումը չի կարող ծախսվել այլ նպատակի համար:

### Տավուշի մարզից կամավոր ատեստավորմանը մասնակցելու հայտ է ներկայացրել շուրջ 200 մանկավարժ

Խորհրդակցության ընթացքում անդրադարձ է կատարվել նաեւ պարտադիր եւ կամավոր ատեստավորմանը: Կամավոր ատեստավորմանը մասնակցելու հայտ ներկայացրած շուրջ 4000 ուսուցիչների ատեստավորումը տեղի կունենա սեպտեմբերին, ինչը նաեւ աշխատավարձի բարձրացման հնարավորություն կտա: Կամավոր ատեստավորման ժամանակացույցը եւ ըստ առարկաների ուղեցույցները կհրապարակվեն առաջիկայում:

Տավուշի մարզից այս տարվա կամավոր ատեստավորմանը մասնակցելու հայտ է ներկայացրել շուրջ 200 մանկավարժ: Նշելով, որ սա վատ ցուցանիշ չէ, Ժաննա Անդրեասյանը հույս է հայտնել, որ հետագա տարիներին այս թիվը կավելանա:

Նշվել է, որ Տավուշի մարզից այս տարի բարձրագույն ուսումնական հաստատություններ են ընդունվել շուրջ 478 դիմորդներ, որոնցից 68-ը՝ անվճար: Դիմորդներից շատերը՝ շուրջ 185-ը, նախընտրել են ԵՊՀ Իջեւանի մասնաճյուղը:

### Տնօրենն ու փոխտնօրենը կարող են դասավանդել, եթե առարկայական ուսուցիչն ապահովված է դրույքով

Հանրակրթության վարչության պետ Արսեն Բաղդասարյանը ներկայացրել է հանրակրթության բնագավառում կատարված օրենսդրական փոփոխություններին առնչվող պարզաբանումները: Նա մասնավորապես անդրադարձել է *«Հանրակրթության մասին»* ՀՀ օրենքի նոր կարգավորումներին, նախադպրոցական հաստատությունների տնօրեններին ներկայացվող որակավորման պահանջներին եւ այլ հարցերի:

2022 թվականի մարտից ուժի մեջ մտած *«Հանրակրթության մասին»* ՀՀ օրենքի փոփոխությամբ՝ դպրոցի վարչական աշխատողները՝ տնօրենը, տնօրենի տեղակալը, կարող են տվյալ դպրոցում դասաժամեր դասավանդել միայն այն դեպքում, եթե առարկայական մասնագետներն ապահովված են լիարժեք դրույքով:

Պատասխանելով տնօրենների կողմից այս առնչությամբ բարձրացված հարցերին՝ Ժաննա Անդրեասյանը նշել է. *«Այս փոփոխությամբ մենք կարգավորել ենք այն դեպքերը, թե երբ է ստեղծվում հնարավորություն՝ վարչական աշխատողների, տնօրենների եւ փոխտնօրենների դասավանդման համար: Մենք պետք է կարողանանք առավելագույն ժամաքանակ ապահովել դպրոցի գործող ուսուցիչների համար եւ վարչական աշխատողների դասավանդումը դիտել իբրեւ տարբերակ՝ ըստ անհրաժեշտության: Ինչ վերաբերում է այն մտահոգությանը, թե տնօրեններն ու փոխտնօրենները շատ դեպքերում լավ մասնագետներ են, այդ դեպքում, կարծում եմ, ճիշտ կլինի, որ նրանց ներուժն օգտագործվի որպես ուսուցիչ: Մեր նպատակը որեւէ մեկին վնասելը չէ: Մեր նպատակը լավագույն մասնագետներին մանկավարժական գործունեության համար առավել լավ միջավայր եւ պայմաններ ստեղծելն է»:*

Նախարարի տեղակալը ասել է, որ նախատեսվում է բարձրացնել նաեւ տնօրենների աշխատավարձերը: Նրա խոսքով՝ այժմ մշակվում է նոր կարգ, որը ենթադրվում է, որ ուժի մեջ է մտնելու 2023 թվականի սեպտեմբերից եւ հնարավորություն է տալու բարձրացնելու տնօրենների, փոխտնօրենների եւ մնացած վարչական աշխատողների աշխատավարձերը:

ԿԶՆԱԿ-ի տնօրեն Արտաշես Թորոսյանը ներկայացրել է հանրակրթության նոր չափորոշչի ներդրմանն առնչվող մի շարք պարզաբանումներ: Մասնավորապես՝ անդրադառնալով նախագծային եւ հետազոտական ուսուցմանը՝ Թորոսյանը նշել է, որ այդ աշխատանքները պետք է իրականացնել ուսումնական պլանով նախատեսված ընտրովի բաղադրիչի հաշվին, որին հատկացված են համապատասխան ժամաքանակներ եւ դրանց տնօրինման հարցում դպրոցն ազատ է:

### Օգոստոսյան խորհրդակցությունների ժամանակացույց

Նշենք, որ նույն օրն Իջեւանի թիվ 5 դպրոցում ԿԶՆԱԿ-ի մասնագետներն առանձին աշխատանքային խորհրդակցություն են վարել մարզի դպրոցների փոխտնօրենների հետ, որի ընթացքում նրանց ներկայացվել են ուսումնական նոր նյութեր եւ մեթոդական ուղեցույցներ:

Խորհրդակցության ընթացքում նախարարի տեղակալն ու մյուս պատասխանատուները պատասխանել են տնօրենների հարցերին, որոնք վերաբերել են դպրոցների շենքերի տեխնիկական վիճակին, աշխատավարձերի բարձրացմանը, ատեստավորմանը եւ մի շարք այլ խնդիրների:

Նշենք, որ օգոստոսյան խորհրդակցությունների նպատակն է՝ նոր ուսումնական տարվան ընդառաջ ոլորտի խնդիրները քննարկել տեղերում՝ տնօրենների, հանրակրթության մարզային պատասխանատուների հետ:

Քննարկումների օրակարգում ընդգրկված են 2022-2023 ուսումնական տարվա ընթացիկ գործողություններին վերաբերող հարցեր: Ըստ սահմանված ժամանակացույցի՝ հանրակրթական դպրոցների տնօրենների խորհրդակցությունները մեկնարկել են Տավուշի մարզից՝ օգոստոսի 19-ին:

ՀՀ Արագածոտնի մարզում խորհրդակցություն անցկացվել է օգոստոսի 23-ին: Արմավիրում տեղի կունենա օգոստոսի 24-ին, Արարատում եւ Վայոց ձորում՝ օգոստոսի 25-ին, Սյունիքում (Կապան եւ Գորիս)՝ օգոստոսի 26-ին, Կոտայքի եւ Գեղարքունիքի մարզերում՝ օգոստոսի 29-ին, Շիրակում եւ Լոռիում՝ օգոստոսի 30-ին: Երեւան քաղաքի նախադպրոցական, հանրակրթական, ինչպես նաեւ ԿԳՄՄՆ ենթակայության ուսհաստատությունների տնօրենների խորհրդակցությունները տեղի կունենան օգոստոսի 31-ին:

***Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ***

**Մեծարում**

# Անուրանալի ներդրում

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Վահրամ Դումանյանն** այցելել է ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Վանիկ Զաքարյանի** բնակարան՝ տեսակցելու ակադեմիկոսին եւ պատվելու նրա վաստակը:

ԿԳՄՍ նախարարին ուղեկցել է ՀՀ կրթության եւ գիտության նախկին նախարար, ակադեմիկոս **Էդուարդ Ղազարյանը:**

Վահրամ Դումանյանը բարձր է գնահատել Վանիկ Զաքարյանի դերակատարությունը Հայաստանի գիտական, ակադեմիական կյանքում, ինչպես նաեւ հայկական շախմատի զարգացման գործում ունեցած նրա անուրանալի ներդրումը:

Նախարարը նշել է, որ իր համար մեծ պատիվ է ակադեմիկոսի հետ անձամբ շփվելն ու նրան տեսակցելը: Վահրամ Դումանյանն առողջություն եւ բարօրություն է մաղթել Վանիկ Զաքարյանին՝ ընդգծելով նաեւ նրա մեծ վաստակը սերունդների կրթման եւ դաստիարակության գործում:

Վանիկ Զաքարյանն ավելի քան 100 գիտական եւ գիտամեթոդական աշխատանքների հեղինակ է, բազմաթիվ ատենախոսությունների ղեկավար:

Նա ԽՍՀՄ սպորտի վարպետ է, Հայաստանի շախմատի կրկնակի չեմպիոն (1961, 1976): 1990-1994 թթ. Վանիկ Զաքարյանը եղել է Հայաստանի շախմատի ֆեդերացիայի փոխնախագահը, իսկ 1994-2004 թթ.՝ նախագահը: 2004 թվականից Շախմատի միջազգային ֆեդերացիայի (ՖԻԴԵ) պատվավոր փոխնախագահն է:

*«Հայաստանի շախմատի հավաքականի՝ Համաշխարհային օլիմպիադայում գրանցած վերջին հաջողությունից հետո ցանկացա այցելել Հայաստանում շախմատի զարգացման գործում լրջագույն ներդրում ունեցած մեր անվանի ակադեմիկոսին: Վանիկ Զաքարյանը երկար տարիներ եղել է Հայաստանի շախմատի ֆեդերացիայի նախագահը, այս ոլորտում ունի շատ մեծ հետագիծ եւ անուրանալի ներդրում: Դա մենք իսկապես շատ ենք գնահատում եւ կարեւորում»,-* փաստել է ԿԳՄՍ նախարարը:

Վահրամ Դումանյանը Վանիկ Զաքարյանի հետ զրույցում վերհիշել է նրա ջանքերով Հայաստանում անցկացված երկու խոշորագույն շախմատային միջոցառումները՝ 1996 թվականի Համաշխարհային օլիմպիադան եւ աշխարհի թիմային առաջնությունը:

Ակադեմիկոս Էդուարդ Ղազարյանի խոսքով՝ այն, որ մեր երկրի համար այդպիսի ծանր ժամանակներում Հայաստանում անցկացվեց Շախմատի համաշխարհային օլիմպիադան, իսկապես, անհավանական իրադարձություն էր. *«Դրանում շատ մեծ էր հենց Վանիկ Զաքարյանի դերակատարությունը: Միջազգային ֆեդերացիայի՝ նրա հանդեպ ունեցած մեծ հարգանքի շնորհիվ՝ օլիմպիադայի անցկացումը վստահվեց Հայաստանին: Իսկապես շատ մեծ է նրա վաստակը հայկական շախմատի տարածման եւ զարգացման գործում: Վանիկ Զաքարյանը մեծ հեղինակություն է վայելում ՖԻԴԵ-ում, որտեղ իրեն գնահատում եւ ճանաչում են»:*

Նշենք՝ Վանիկ Զաքարյանը 1996 թվականին պարգեւատրվել է ՖԻԴԵ-ի միջազգային կազմակերպչի դիպլոմով: Նա նաեւ շախմատային *«Օսկարի»* դափնեկիր է: Նրա անունը նշված է ՖԻԴԵ-ի ոսկե գրքում:

86-ամյա ակադեմիկոսի հետ ԿԳՄՍ նախարարը զրուցել է նաեւ 2022 թվականի Համաշխարհային օլիմպիադայում Հայաստանի հավաքականի ցույց տված տպավորիչ խաղի եւ գրանցած արդյունքների շուրջ: Վանիկ Զաքարյանը նշել է՝ ինքը հետեւել է Հայաստանի հավաքականի ելույթներին եւ ուրախ է մեր շախմատիստների արձանագրած հաջողության համար: Նա առանձնացրել է հատկապես գրոսմայստեր Գաբրիել Սարգսյանի խաղը՝ կարեւորելով նաեւ նրա՝ որպես առաջատարի որակները:

Հիշեցնենք՝ Հայաստանի շախմատի տղամարդկանց հավաքականը վերջերս դարձել է Հնդկաստանում անցկացված Համաշխարհային օլիմպիադայի փոխչեմպիոն՝ վաստակած 19 միավորով: Նույնքան միավորով, սակայն լրացուցիչ ցուցանիշներով չեմպիոնի կոչումը նվաճել է Ուզբեկստանի ընտրանին:

***Հեղինե ՀՈՎՀԱՆԻՍՅԱՆ***

# Պետության կայացման հիմքը կրթությունն է

***սկիզբը՝ էջ 1***

*«Ժամանակակից աշխարհում ապրող մարդու համար առավել կարեւոր է դառնում մրցունակ կրթություն ստանալը, քանի որ կրթության միջոցով է անհատը դիմակայում ի հայտ եկած մարտահրավերներին: Արագ փոփոխվող աշխարհում այսօր հնարավոր չէ առաջընթաց ունենալ՝ առանց որակյալ եւ ժամանակի պահանջներին համապատասխան կրթության:*

*Հայաստանի Հանրապետությունն առանձնահատուկ կարեւորում է համապատասխան գիտելիքով եւ ստեղծարարությամբ օժտված անհատին, որն էլ հենց դառնում է հանրապետության տնտեսության եւ հանրային կյանքի շարունակական զարգացման գրավականը: Մարդկային կապիտալի զարգացման մեջ շոշափելի ներդրումներ կատարելու միջոցով է հաղթահարվում սոցիալական բեւեռացումը, կանխվում ժողովրդավարական զարգացումների վտանգները, լուծվում կրթության ճգնաժամի հիմնախնդիրը»,-* իր խոսքում նշել է Վահրամ Դումանյանը:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարն ընդգծել է նաեւ, որ պետության նպատակներն են բարձրագույն կրթության ու գիտության միջազգայնացումը, Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում եւ Եվրոպական հետազոտական տարածքում ինտեգրումը, բարձրագույն կրթություն, գիտություն եւ տնտեսություն փոխկապակցվածության ապահովումը, ինչպես նաեւ կրթություն-գիտահետազոտական աշխատանք-նորարարություն համակարգի արդյունավետ փոխգործակցության ամրապնդումը:

*«Գաղտնիք չէ, որ կրթությունն է պետության կայացման ու զորացման հիմքը, քաղաքացու եւ անհատի ձեւավորման կարեւոր նախապայմանը ու կյանքում կայանալու միակ, անձեռնմխելի կապիտալը: Հայաստանի Հանրապետությունը պատրաստ ու բաց է նոր համագործակցությունների համար»,-* ամփոփել է Վահրամ Դումանյանը:

Նշենք, որ Կրթական հետազոտությունների եվրոպական ասոցիացիան ամեն տարի կազմակերպում է կրթական հետազոտությունների վերաբերյալ համաժողով (ECER), որն անցկացվում է անդամ երկրներից մեկում: 2022 թ. համաժողովի անցկացման վայր է ընտրվել Երեւանի պետական համալսարանը, որը 2014 թվականից Մանկավարժության եւ կրթության զարգացման կենտրոնի անդամակցությամբ դարձել է Կրթական հետազոտությունների եվրոպական ասոցիացիայի լիիրավ անդամ:

*«Ողջունում եմ համաժողովի բոլոր մասնակիցներին Երեւանի պետական համալսարանում: Սա իր տեսակի մեջ եզակի եւ ամենամեծ իրադարձությունն է կրթական հետազոտությունների ոլորտում, որը համախմբում է կրթական հաստատություններին, հետազոտական ընկերություններին եւ կրթական փորձագետներին տարբեր երկրներից: Կրթության ոլորտի վերաբերյալ տարբեր հետազոտություններ կներկայացվեն եւ կքննարկվեն մասնագետների, կրթության փորձագետների, ինչպես նաեւ տարբեր հետազոտական հաստատությունների հետազոտողների հետ»,-* ասել է ԵՊՀ ռեկտորը եւ հավելել, որ համաժողովը մեկտեղում է ավելի քան 2.000 պատվիրակների աշխարհի 43 երկրից եւ համարվում է ոլորտի կարեւորագույն իրադարձություններից:

Հավելենք, որ համաժողովին մասնակցում են հայաստանյան գրեթե բոլոր բուհերը, գիտահետազոտական ինստիտուտներն ու կենտրոնները, ինչպես նաեւ Հայաստանում գործող միջազգային կազմակերպություններ: Համաժողովի ընթացքում կազմակերպվելու են ոչ միայն աշխատաժողովներ 40 բաժանմունքներում, այլեւ պլենար քննարկումներ, միջսերնդային հանդիպումներ, հաղորդակցական ու սոցիալական կապերի հաստատման փակ նախաձեռնություններ:

# Ավանդական կրթական խորհրդաժողովում

*սկիզբը՝ էջ 1*

Խորհրդաժողովի մեկնարկի կապակցությամբ՝ մասնակիցներին շնորհավորական ուղերձ է հղել ՀՀ ԿԳՄՍ նախարար **Վահրամ Դումանյանը:** Ուղերձում, մասնավորապես, ասված էր. *«Շնորհավորում եմ բոլորին՝ խորհրդաժողովի մեկնարկի կապակցությամբ: Խորհրդաժողովում մեզ համախմբում է մեկ մտայնություն՝ հայեցի կրթության եւ դաստիարակության առկա հիմնախնդիրները Սփյուռքում: Այն հնարավորություն է ընձեռում համախմբվելու եւ համատեղ քննարկելու այն ուղին, որով պետք է քայլի հայը, հստակեցնելու կրթության ոլորտում պետական քաղաքականությամբ ամրագրված համագործակցության զարգացման հեռանկարները, գնահատելու արդեն առկա եւ իրականացվող ծրագրերի արդյունավետությունը: Այս օրերի արդյունքում մշակված բանաձեւը պետք է արտացոլի այն հիմնախնդիրները, որոնց լուծումը կարեւոր է Հայաստանի եւ Սփյուռքի կրթական դաշտի համար: Մաղթում եմ ձեզ բարի երթ եւ բեղմնավոր օրեր»:*

Խորհրդաժողովի բացմանը մասնակցել են Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Անահիտ Հակոբյանը** եւ նախարարի տեղակալ **Միքայել Համբարձումյանը:**

ԱՀ ԿԳՄՍ նախարար Անահիտ Հակոբյանը եւս շնորհավորել է խորհրդաժողովի մասնակիցներին եւ ներկայացրել Արցախի Հանրապետության կրթական ներկայիս իրավիճակը, հետպատերազմյան խնդիրները, առկա մարտահրավերները նախադպրոցական կրթությունից մինչեւ բուհեր եւ գիտություն: Հարց ու պատասխան ձեւաչափով տեղի է ունեցել քննարկում, հնչել են համագործակցության առաջարկներ Արցախի ուսուցիչներին վերապատրաստելու, սեմինարներ կազմակերպելու եւ կրթական ոլորտի բարելավման այլ ուղղություններով: Անահիտ Հակոբյանն ի պատասխան առաջարկների՝ ասել է, որ պատրաստակամ է դրանք մանրամասն քննարկել եւ ծառայեցնել ի նպաստ Արցախի կրթական համակարգի բարելավման:

Խորհրդաժողովում, որպես աշխատանքի հիմնական ձեւ, սահմանված են լիագումար նիստեր եւ բաց քննարկումներ: Համախմբվելով ընդհանուր օրակարգի շուրջ՝ խորհրդաժողովի մասնակիցները ծանոթանում են ՀՀ-ում, ԱՀ-ում եւ Սփյուռքի տարբեր տարածաշրջանների կրթության ոլորտում առկա իրավիճակին, ուրվագծում են համագործակցության եզրերը եւ հստակեցնում հետագա խնդիրներն ու անելիքները: Տարբեր երկրների պատվիրակներն աշխատում են նաեւ միեւնույն թեմատիկ մասնախմբերում՝ փոխանակելով իրենց փորձը, ներկայացնելով ծրագրերը, ծանոթանալով Հայաստանում մշակված եւ իրագործվող ուսումնական ծրագրերին ու մանկավարժական ձեռքբերումներին: Մասնախմբերում այս տարվա առանցքային թեմաներն են Սփյուռքի ամենօրյա եւ մեկօրյա դպրոցներում արեւելահայերենի եւ արեւմտահայերենի դասավանդման հիմնախնդիրները, կրթական կառույցների երկկողմանի համագործակցության հեռանկարները, նախադպրոցականների եւ մեծահասակների կրթության կազմակերպման առանձնահատկությունները, խնդիրները եւ այլն:

Խորհրդաժողովն ամփոփվելու է քննարկումների արդյունքներով պայմանավորված բանաձեւի ընդունմամբ, որն ուղղորդիչ է դառնալու ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության առաջիկա երկու տարիների գործունեության համար:

Առաջին անգամ Համահայկական կրթական խորհրդաժողովն անցկացվել է 2004 թվականին:

2020 թվականին COVID-19 վարակով պայմանավորված՝ խորհրդաժողովն անցկացվել է հեռավար ձեւաչափով՝ ՀԲԸՄ հայկական վիրտուալ համալսարանի (ՀՎՀ) հետ համագործակցությամբ:

Խորհրդաժողովն անցկացվում է լիագումար նիստերի եւ առանձին մասնախմբերում աշխատանքային քննարկումների ձեւաչափով: Այս ընթացքում լիագումար նիստերում մասնակից ուսուցիչները ներկայացրել են իրենց համայնքներում կրթության կազմակերպման առանձնահատկություններն արդի Սփյուռքում: Թեման քննարկվել է նաեւ մասնախմբերում: Ղրիմի Եվպատորիա քաղաքի հայկական մեկօրյա դպրոցի ուսուցչուհի **Կարինե Ասլանյանը** ներկայացրել է, որ պետական աջակցությամբ միջնակարգ դպրոցում ստեղծել են *«Մայրենի լեզու»* նախագիծը, կազմել են ծրագիրը, որը հաստատվել է պետության կողմից: Ուսուցիչները սկզբնական շրջանում աշխատել են անվարձահատույց:

*«Հետագայում մենք կարողացանք հասնել այն արդյունքին, որ որոշակի պայմաններում վարձատրվեցինք: Շատ արագ ինքնակազմակերպվելով՝ համագործակցեցինք ծնողների հետ եւ ստացանք դիմումներ: Յոթ երեխայի դիմում ստանալու դեպքում տրամադրվում էր 2 դասաժամ՝ վարձատրությամբ. այսօր ունենք 16 երեխա՝ 4 դասաժամով»,-* իրենց փորձն է ներկայացրել Ղրիմի հայ համայնքի ներկայացուցիչը:

Չեխիայի մայրաքաղաք Պրահայում հայ մանուկների համար վերջերս բացվել է ամենօրյա մանկապարտեզ. մինչ այդ գործել է մեկօրյա դպրոց: Ինչպես ներկայացրել է այժմ մանկապարտեզում, իսկ մինչ այդ դպրոցում աշխատող **Գայանե Մելքոնյանը,** ինքը մասնագիտությամբ ֆինանսիստ է, սակայն ոգեշնչված Ռուսաստանում Հայաստանի դեսպանատանը կից գործող *«Վերածնունդ»* մեկօրյա դպրոցի գործունեությամբ՝ որոշել է փորձի փոխանակմամբ հայագիտական առարկաներ դասավանդել Պրահայի հայկական դպրոցում:

*«Դպրոց հաճախում էր շուրջ 50 աշակերտ՝ հիմնականում կրտսեր տարիքի. այնքանով, որ ծնողներն էին նրանց ուղեկցում: Դպրոցի նկատմամբ հետաքրքրությունն այդքան մեծ չէր: Պետք էր շատ համոզիչ լինել՝ գրավելու համար: Սակայն, նորաբաց ամենօրյա մանկապարտեզը, կարծես, ավելի մեծ հեռանկարներ ունի,- իր գնահատականն է ներկայացրել Գայանե Մելքոնյանը եւ ավելացրել,- եվրոպական միջավայրում մեծացող հայ երեխայի համար հայագիտական առարկաների դասավանդման մեթոդները պետք է վերանայվեն»:*

Կարեւորվել է հատկապես հայոց պատմության հաղթանակների ու փառահեղ էջերի ճիշտ մատուցումը, ինչն առավել հետաքրքրական կդարձնի հայկական կրթօջախը Սփյուռքում ապրող հայ մանկան համար: Ուսուցչուհին որպես կարեւոր խնդիր ընդգծել է նաեւ ծնողների մոտեցումն ու վերաբերմունքը՝ միտված հայապահպանությանը:

Փորձի փոխանակման համատեքստում տարբեր համայնքներ ներկայացնող կրթական ոլորտի ներկայացուցիչներն արձանագրել են, որպես հայկական դպրոցի գործունեության շարունակականությունն ապահովելու կարեւոր քայլ, առաջնային է ուսումնասիրել տվյալ երկրի օրենսդրական դաշտը, որը շատ հաճախ առավել դյուրին ճանապարհով թույլ է տալիս կարգավորել հայապահպանության հիմնախնդիրները՝ ի նպաստ համայնքի:

Խորհրդաժողովի մասնակիցները տեղում նախանշել են հետագա համագործակցության առանցքային տարբերակները:

Մասնախմբերում քննարկվել են նաեւ ՀՀ ԿԳՄՍ նախարարության հետ համագործակցության ուղիները եւ հիմնախնդիրները: Փոխգործակցության թիրախում հիմնականում անհրաժեշտ գրականության տրամադրումն էր:

Կահիրեում գտնվող Գալուստյան-Նուբարյան ազգային վարժարանի տնօրեն **Գեւորգ Գազանճյանի** գնահատմամբ՝ հայապահպանության խնդիրը համայնքում օրհասական է դառնում: Նրա տեղեկացմամբ՝ վարժարանն ունի գրքերի խնդիրգ դրանք փոխարինվում են ուսուցիչների կողմից հավաքագրված տեքստերով՝ ըստ թեմաների: Որպես աջակցություն եւ համագործակցություն ԿԳՄՍ նախարարության կողմից՝ առաջարկվել է արդեն իսկ հավաքագրված տեքստերն ուղարկել Հայաստան՝ փորձագիտական կարծիքի, ինչից հետո դրանք անհրաժեշտության դեպքում կիրատարակվեն որպես ձեռնարկ եւ կուղարկվեն Կահիրեի հայ համայնք: Ըստ Գազանճյանի՝ վարժարանում ուսանող աշակերտը պետք է հայերենից քննություն հանձնի հաջորդ դասարան փոխադրվելու համար, սակայն աշակերտն ինքնին հայոց լեզվի կարեւորությունը համայնքում այլեւս քիչ է զգում: Քննարկվել են Հայաստանից հայերեն դասավանդող ուսուցչի գործուղման հեռանկարներն ու հնարավորությունները ներկա պայմաններում:

Առաջարկվել է համագործակցաբար օգտվել Լիբանանի հայ համայնքի դասագրքերից, ինչին ի պատասխան՝ Լիբանանի հայ համայնքը ներկայացնող **Տիգրան Ճինպաշյանն** աջակցության պատրաստակամություն է հայտնել: Վերջինս ընդգծել է դասագրքերի վերանայման խնդիրը, ինչպես նաեւ բարձրաձայնել է Լիբանանում հայ ուսուցիչների համալրման եւ մասնավորապես հայոց պատմություն դասավանդող մեթոդիստ ունենալու կարեւորության մասին:

Խորհրդաժողովում, որպես կարեւոր հիմնախնդիրներ, զեկույցներ են հնչել նաեւ լեզվական քաղաքականության (**Դավիթ Գյուրջինյան**, Լեզվի կոմիտե), արեւմտահայերենի պահպանության, ճիշտ տառադրման անհրաժեշտության (**Սուսաննա Տիոյան,** Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի արեւմտահայերենի բաժին) եւ այլ խնդիրների վերաբերյալ:

## Փոփոխություններ ուսման վարձավճարի փոխհատուցման նպատակով եկամտային հարկի գումարների վերադարձման կարգում

Կառավարության որոշմամբ՝ փոփոխություն է կատարվել եկամտային հարկով ուսման վարձավճարի փոխհատուցման կարգում:Սահմանվել է, որ դիմումներն ու համապատասխան փաստաթղթերը հաջորդ կուրս փոխադրվելուց կամ կրթական ծրագրով ուսումնառությունն ավարտելուց հետո ներկայացվում են բուհի ռեկտորին: Ընդ որում՝ սովորողը եկամտային հարկի գումարների վերադարձման նպատակով կարող է դիմել տարվա մեջ երկու անգամ՝ սեպտեմբերի 1-ից 15-ը կամ մարտի 1-ից 15-ը: Սահմանված ժամկետներում դիմում չներկայացնելու դեպքում՝ սովորողը կարող է դիմել հաջորդ կուրս փոխադրվելու կամ ուսումնական հաստատությունն ավարտելու տարվան հաջորդող երկու տարիների ընթացքում:

Ուսանողների տվյալները հավաքագրելուց հետո բուհերը դրանք սահմանված ձեւաչափով ներկայացնում են Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն՝ համապատասխանաբար մինչեւ տվյալ տարվա սեպտեմբերի 30-ը կամ մարտի 30-ը: Նախարարությունը վերոնշյալ փաստաթղթերի ուսումնասիրությունից հետո ուսման վարձի փոխհատուցման իրավունքի հաստատման դեպքում համապատասխան տեղեկատվությունը փաթեթով ներկայացնում է Պետական եկամուտների կոմիտե:

Եկամտային հարկի վերադարձի մասին դիմումը նախարարության կամ բուհի կողմից մերժվում է, եթե բուհը հավատարմագրված չէ, մասնագիտությունը ներառված չէ ՀՀ կառավարության՝ 2020 թվականի հունիսի 18-ի N 1035-Ն որոշմամբ հաստատված մասնագիտությունների ցանկերում, դիմումը ներկայացվել է սահմանված ժամկետների խախտմամբ, ինչպես նաեւ այն դեպքում, երբ սովորողը չի հանդիսանում ՀՀ քաղաքացի կամ ունի ուսման վարձի պարտք:

Այս ընթացակարգը հնարավորություն կտա հարկային մարմիններին խնայել ռեսուրսներ եւ աշխատաժամանակ՝ հաշվի առնելով, որ եկամտային հարկի գումարների վերադարձի իրավունքի հավաստիության համար հարկային մարմինը ստիպված չի լինի ուսումնասիրել փաստաթղթերը եւ ուսումնառությանն առնչվող մնացած հանգամանքները:

Փոփոխությունը կատարվել է՝ հաշվի առնելով ուսման վարձավճարի փոխհատուցման նպատակով եկամտային հարկի գումարների վերադարձման գործընթացում վեր հանված խնդիրները եւ դրանց լուծման հրատապությունը:

Այս որոշմամբ կապահովվի եկամտային հարկի գումարների վերադարձման բնականոն, ավելի դյուրին ընթացակարգ:

***Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ***

Հայ-Բելառուսական

# Նախարարն ընդունել է դեսպանին

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Վահրամ Դումանյանն** ընդունել է ՀՀ-ում Բելառուսի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան **Ալեքսանդր Կոնյուկին:** Հանդիպմանը ներկա է եղել նաեւ նախարարի տեղակալ **Արթուր Մարտիրոսյանը:**

Ողջունելով դեսպանի այցը նախարարություն եւ կարեւորելով երկու երկրների միջեւ բարեկամական հարաբերությունները՝ Վահրամ Դումանյանը վստահություն է հայտնել, որ կրթության, գիտության, մշակույթի, սպորտի եւ երիտասարդության ոլորտներում անհրաժեշտ է առավել սերտացնել համագործակցությունը: Նախարարը շեշտել է համատեղ նախագծերի իրականացումը՝ համոզմունք հայտնելով, որ հանդիպման արդյունքում կնախանշվեն մի շարք գործնական քայլեր:

Վահրամ Դումանյանի խոսքով՝ հատկապես գիտության եւ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում՝ երկու երկրներն ունեն շատ ընդհանրություններ եւ փորձի փոխանակման մեծ ներուժ:

Նախարարը նշել է, որ 2018 թվականին ստորագրվել է *«Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության եւ Բելառուսի Հանրապետության մշակույթի նախարարության միջեւ 2019-2022 թվականների մշակութային համագործակցության մասին»* ծրագիրը, որի համաձայն՝ 2019 թվականի մայիսի 16-19-ը կազմակերպվել է *«Բելառուսի մշակույթի օրեր Հայաստանում»* ծրագիրը: Ըստ



Վահրամ Դումանյանի՝ 2020 թվականին Բելառուսում նախատեսվում էր կազմակերպել Հայաստանի մշակույթի օրերը, ինչը, ցավոք, չի կայացել՝ COVID-19 համավարակով եւ պատերազմով պայմանավորված: Նախարարը հույս է հայտնել, որ առաջիկայում հնարավոր կլինի դրանք կազմակերպել՝ հաշվի առնելով համատեղ ծրագրերն ու նախագծերը:

ՀՀ-ում Բելառուսի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Ալեքսանդր Կոնյուկը շնորհակալություն է հայտնել՝ իրենց նախաձեռնություններին եւ առաջարկներին արագ արձագանքելու համար: Նա մատնանշել է այն ուղղությունները, որոնցով բելառուսական կողմը պատրաստ է գործնական քայլերի՝ ընդգծելով, որ Հայաստանում կրթության որակը բարձր է: Դեսպանը Վահրամ Դումանյանին հրավիրել է Բելառուս՝ ծանոթանալու այդ երկրի գիտակրթական եւ մշակութային հաստատությունների գործունեությանը, հատկապես՝ ՏՏ ոլորտում բելառուսական փորձին:

Կողմերն անդրադարձել են նաեւ երկուստեք հետաքրքրություն ներկայացնող այլ հարցերի եւ գործնական քայլերի անցնելու վերաբերյալ պայմանավորվածություն ձեռք բերել:

***Հեղինե ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ***

Նոր նվաճում

# Մեդալներ՝ միջազգային օլիմպիադայում

Աստղագիտության եւ աստղաֆիզիկայի միջազգային 15-րդ օլիմպիադայում ՀՀ մասնակիցները նվաճել են 3 բրոնզե մեդալներ:

Օգոստոսի 14-22-ը Վրաստանի Քութայիսի քաղաքում անցկացվել է Աստղագիտության եւ աստղաֆիզիկայի միջազգային 15-րդ օլիմպիադան, որին մասնակցել են աշխարհի 46 երկրի 250 աշակերտներ:

Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտներ **Մարիա Առաքելյանն** ու **Վյաչեսլավ Պետրոսյանը** եւ ՀԱՊՀ-ի ավագ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտ **Արտաշես Մկրտչյանն** արժանացել են բրոնզե մեդալների:

Օլիմպիադայում իրենց ուժերն են չափել նաեւ Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտներ **Արտավազդ Հարությունյանը** եւ **Մարի Հայրապետյանը:**

Հայաստանի թիմը ղեկավարել են Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցի ուսուցիչ **Վարդգես Մամբրեյանը** եւ ՀՀ ԳԱԱ Բյուրականի աստղադիտարանի աշխատակից, ԵՊՀ դասախոս **Արուսյակ Հարությունյանը:**

Հիշեցնենք, որ 2021 թ. Հայաստանի թիմն Աստղագիտության միջազգային օլիմպիադայում արժանացել էր 1 ոսկե, 1 արծաթե մեդալների եւ 2 գովասանագրերի:

Քննարկում

# Ինստիտուցիոնալ նոր մոտեցումներ

Տեղի է ունեցել մասնագիտական կրթության եւ ուսուցման (ՄԿՈՒ) ոլորտում օրենսդրական փոփոխությունների նախագծի քննարկում, որին բացման խոսքով հանդես է եկել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալը **Ժաննա Անդրեասյանը:**

Փոխնախարարը նշել է, որ Հայաստանում մասնագիտական կրթության եւ ուսուցման ոլորտում առաջարկվող օրենքի նոր նախագիծն ամբողջությամբ բավարարում է այն պահանջները, որոնք սահմանված են՝ որպես ոլորտի կարեւորագույն թիրախներ:

Ժաննա Անդրեասյանը վստահեցրել է, որ քննարկումների արդյունքում հնարավոր կլինի բարելավել նաեւ որոշ դրույթներ, օրինակ, ներառականության ապահովման ուղղությամբ, որը նույնպես առաջնային թիրախ է:

Նա տեղեկացրել է, որ ՀՀ կառավարությունը հավանություն է տվել կրթության՝ մինչեւ 2030 թվականը զարգացման պետական ծրագրին, որն առաջիկայում քննարկվելու է Ազգային ժողովում: Ծրագրով սահմանված են նաեւ արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթության, մասնավորապես՝ մասնագիտական ուսումնական հաստատությունների (ՄՈՒՀ) զարգացման թիրախային ուղղությունները:

*«Մասնագիտական կրթության եւ ուսուցման մասին օրենքի քննարկվող նախագծում ներառված են մեր բոլոր այն գաղափարները, որոնք արդեն մի քանի տարի է փորձարկման մակարդակով դիտարկում ենք տարբեր քոլեջներում եւ ուսումնական հաստատություններում՝ գործատուների հետ աշխատանքի, կրթության կազմակերպման նոր ձեւերի, ուսանողների ակտիվության խրախուսման ուղղություններով: Դրանք դառնալու են ինստիտուցիոնալ իրողություն:*

*Նախագծում շեշտադրել ենք մասնագիտական կրթության եւ ուսուցման ոլորտի այնպիսի թիրախներ, առանց որոնց՝ օրենսդրական կարգավարումների անհնար է հասնել: Շեշտադրումները վերաբերում են շրջանավարտների զբաղվածությանը, կառավարման նոր՝ մասնավոր հատվածի հետ համատեղ մոդելներ գտնելուն, ֆինանսավորման նոր բանաձեւերի կիրառմանը եւ այլն»,-* նշել է Ժաննա Անդրեասյանը:

Ծրագիրն իրականացվում է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) եւ *«Շվեյցարիայի եկեղեցու օգնություն»* (HEKS/EPER) կազմակերպության կողմից, որին ներգրավված են նաեւ *«Ռազմավարական զարգացման գործակալություն»* (ՌԶԳ) ՀԿ-ն եւ Կիրառական գիտությունների Բեռնի համալսարանի գյուղատնտեսության, անտառային ու պարենային գիտությունների դպրոցը (HAFL):

Շվեյցարիայի զարգացման եւ համագործակցության գործակալության տարածաշրջանային տնօրենի տեղակալ Վերներ Թուքի խոսքով՝ կրթական համակարգը երկրի բարեկեցության, տնտեսական զարգացման, զբաղվածության իրավիճակի, ինչպես նաեւ միջազգային դիրքի համար առանցքային գործոն է:

**Վերներ Թուքը** նշել է, որ վերջին 12 ամսում ջանքեր են ներդրվել Հայաստանում գյուղատնտեսության ոլորտի մասնագիտական կրթության զարգացման եւ արդիականացման ուղղությամբ. *«Շվեյցարիան 30 տարի առաջ աղքատ երկիր էր, մինչեւ որ սկսեց զարգացնել մասնագիտական կրթության համակարգը: Շվեյցարական համակարգն ուսուցման ընթացքում համադրում է տեսական եւ գործնական փորձառությունը: Ես ուրախ եմ տեսնել, որ Շվեյցարիան Հայաստանի համար վստահություն վայելող գործընկեր է»:*

Միջոցառման ընթացքում կրթության փորձագետ **Մարինե Հակոբյանը** մասնակիցներին ներկայացրել է նախագծով առաջարկվող նոր լուծումները, որից հետո ծավալվել է հարցուպատասխանի ձեւաչափով քննարկում:

Փորձագետի խոսքով՝ օրենքի նոր նախագծով վերանայվել եւ միասնականացվել են օրենքում օգտագործվող հասկացությունները, բարձրացվել են սոցիալական գործընկերների դերը եւ կարգավիճակը, վերափոխվել են ՄՈՒՀ-երի կառավարման համակարգը եւ կառուցվածքը:

Նախագծով նախատեսվել է նաեւ անցում որակավորումների ազգային եւ ոլորտային շրջանակների, ՄՈՒՀ-երում կրեդիտային համակարգի եւ դասավանդողների մասնագիտական որակավորման տարակարգի համակարգի ներդրում: Առաջարկվում է վերանայել կրթական ծրագրերի կազմակերպման մոդելները՝ առկա, հեռավար, դրսեկության ձեւերի մեթոդաբանական համադրությամբ:

Մանրամասնվել են աշխատանքի վրա հիմնված ուսուցման մոդելները եւ դրանց կազմակերպման կառուցակարգերը: Առաջարկվում է բարեփոխել ՄՈՒՀ-երի ֆինանսավորման մեխանիզմը՝ որպես ֆինանսավորման աղբյուր նրանց ընձեռելով ձեռնարկատիրական գործունեության իրականացման հնարավորություն:

Ըստ օրենքի նոր նախագծի՝ օրենսդրական բարեփոխումների առանցքում է լինելու ՄԿՈՒ ոլորտի բարելավումը, մասնավորապես՝ ուսանողների գործնական հմտությունների ձեռքբերման մեխանիզմների եւ մոդելների կատարելագործումը, կրթական գործընթացում մասնավոր հատվածի ներգրավվածությունը՝ սկսած կրթական ծրագրերի մշակումից մինչեւ կրթական վերջնարդյունքի ստուգում եւ գնահատում, ինչպես նաեւ կրթական գործընթացի բոլոր մասնակիցների՝ ուսանողների, ՄԿՈՒ հաստատությունների եւ գործատուների համար օրենսդրական երաշխիքների ապահովումը:

Նախագծի քննարկումը կազմակերպվել էր ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության եւ Ազգային ժողովի գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի համագործակցությամբ՝ *«Հայաստանում գյուղատնտեսության ոլորտում մասնագիտական կրթության եւ ուսուցման արդիականացում»* ծրագրի նախապատրաստական փուլի շրջանակում: Քննարկմանը մասնակցել են պետական մարմինների ներկայացուցիչներ, ՄԿՈՒ հաստատությունների տնօրեններ, այլ գործընկեր կառույցներ: Միջոցառման հիմնական նպատակն էր քննարկել եւ կատարելագործել օրենքի նախագծով առաջարկվող ՄԿՈՒ ոլորտի կարգավորումները:

Մարզական

## Հայ բռնցքամարտիկների հաջողություններն Էրզրումում

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ **Կարեն Գիլոյանն** այսօր ընդունել է հայ բռնցքամարտիկներին, որոնք 2 ոսկե եւ 4 բրոնզե մեդալ են նվաճել Էրզրում քաղաքում օրերս անցկացված կրտսեր տարիքի պատանիների Եվրոպայի առաջնությունում:

Եվրոպայի չեմպիոնի կոչումը նվաճել են **Համեստ Աֆրիկյանը** (42 կգ) ու **Սամվել Սիրամարգյանը** (66 կգ): Բրոնզե մեդալներին էլ արժանացել են **Վահրամ Դովլաթբեկյանը** (40 կգ), **Տիգրան Հովսեփյանը** (50 կգ), **Ալեն Ստեփանյանը** (57 կգ) եւ **Հայկ Ղահրամանյանը** (75 կգ):

Հանդիպմանը, բացի մեդալակիր մարզիկներից, ներկա է եղել նաեւ Հայաստանի բռնցքամարտի ֆեդերացիայի նախագահ **Հովհաննես Հովսեփյանը:**

ՀՀ Կրթության, գիտութաւ, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալը շնորհավորել է պատանի բռնցքամարտիկներին հիանալի ելույթների ու գրանցած արդյունքների համար. *«Շնորհակալ եմ եւ շնորհավորում եմ: Ամենակարեւորը՝ նույն տրամաբանությամբ ու աշխատասիրությամբ շարունակե՛ք մարզվել ու աշխատել: Սա դեռ սկիզբն է. պետք չէ թեւավորվել այս արդյունքներից: Հիմա պետք է ավելի լավ պարապել, աշխատել, որպեսզի մեդալներ նվաճեք նաեւ մեծահասակների պայքարում»:*

Հայաստանի բռնցքամարտի ֆեդերացիայի նախագահ Հովհաննես Հովսեփյանի խոսքով՝ հավաքականի կազմում եղել են նաեւ այլ բռնցքամարտիկներ, որոնք արժանի էին մեդալներ նվաճելուն. *«Շատ լավ թիմ ունենք: Կան այլ բռնցքամարտիկներ եւս, որոնք, վստահաբար, կարող էին մեդալ նվաճել: Հաշվի առնելով, թե որ երկրում էինք ու որքան էին խանգարում ավելորդ էմոցիաները, այս արդյունքը եւս գոհացնող կարելի է համարել: Հոգեբանորեն բավական բարդ մենամարտեր ենք անցկացրել: Բռնցքամարտում տրամադրվածությունը շատ մեծ նշանակություն ունի»:*

Ֆեդերացիայի նախագահը փաստել է՝ առաջին անգամ է ի պատիվ հայ բռնցքամարտիկների՝ Թուրքիայում հնչել հայոց օրհներգը:

Նշենք՝ Համեստ Աֆրիկյանը եզրափակչում շատ բարդ մենամարտ է անցկացրել Անգլիան ներկայացնող Սերենա Մալիի հետ: Առաջին ռաունդում 4:1 հաշվով հաղթել է հայ մարզուհին, 2-րդ ռաունդում նույն հաշվով մրցավարներն առավելությունը տվել են Անգլիայի ներկայացուցչին: 3-րդ վճռորոշ ռաունդում արդեն հաղթանակը շնորհվել է Համեստ Աֆրիկյանին:

Սամվել Սիրամարգյանն էլ եզրափակչում ուժեղ է գտնվել Ուկրաինան ներկայացնող Ալեքսեյ Տատարենկոյից: Արդյունքում՝ բոլոր մրցավարները 5:0 հաշվով հաղթանակը միաձայն շնորհել են հայ մարզիկին: Ի դեպ, Սիրամարգյանն իր հաղթանակը նվիրել է հայրենիքի համար զոհված մորեղբորը:

Կրտսեր տարիքի պատանիների Եվրոպայի առաջնությունում Հայաստանը ներկայացրել են 15 տղա եւ 5 աղջիկ մարզիկներ:

Խորհրդակցություն

# Քննարկվել են հանրակրթության ոլորտի բարեփոխումները

Օգոստոսի 17-18-ը Ծաղկաձորում տեղի է ունեցել *«Հանրակրթության ոլորտի բարեփոխումները»* խորագրով արտագնա խորհրդակցություն, որին մասնակցել է ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Ժաննա Անդրեասյանը:**

Խորհրդակցությանը ներկա են եղել նաեւ ԿԳՄՍՆ հանրակրթության, զարգացման ծրագրերի եւ մոնիթորինգի, անձնակազմի կառավարման, իրավաբանական, ֆինանսաբյուջետային վարչությունների, լիցենզավորման գործակալության, Կրթության տեսչական մարմնի, ԿՀՆԱԿ-ի, ԿՏԱԿ-ի, ԳԹԿ-ի, ՀՄԿ-ի ներկայացուցիչները:

Փոխնախարարը ողջունել է ներկաներին՝ նշելով, որ այսօրինակ խորհրդակցությունները նպաստում են համատեղ ջանքերով նոր գործիքակազմեր մշակելուն, որոնք թույլ են տալիս մեծացնել կրթական համակարգի արդյունավետությունը:

Խորհրդակցության ընթացքում քննարկվել են դպրոցների կառավարման համակարգի փոփոխության, ուսուցիչների մասնագիտական զարգացման, ատեստավորման, դպրոցներում նոր չափորոշիչների կիրառման, գնահատման, քննությունների անցկացման եւ վերանայման վերաբերյալ մի շարք հարցեր:

Ըստ *«Հանրակրթության մասին»* ՀՀ օրենքում կատարված վերջին փոփոխությունների՝ դպրոցներում պետք է ներդրվի կառավարման նոր մոդել՝ տարանջատելով դպրոցի տնօրենի բովանդակային եւ վարչատնտեսական գործառույթները: Դպրոցի տնօրենը պատասխանատվություն է կրելու առավելապես կրթության որակի համար, իսկ շենքի եւ գույքի պահպանության, ֆինանսական, վարչատնտեսական պատասխանատվության գործառույթը կփոխանցվի վարչատնտեսական մասի համակարգողին: Օրենքի այս դրույթի կիրառման շրջանակում խորհրդակցության մասնակիցները քննարկել են *«Լիազոր մարմնի՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունում վարչատնտեսական գործընթացի կառավարումն իրավաբանական անձին պատվիրելու կարգը հաստատելու մասին»* նախագծի նախնական տարբերակը:

Փոխնախարարը մասնակիցներին առաջարկել է ներկայացնել քննարկվող կարգի նախագծի վերաբերյալ իրենց առաջարկությունները եւ դիտարկումները, ինչից հետո միայն այն կամբողջացվի:

Քննարկված մյուս հարցերը վերաբերել են դպրոցներում հանրակրթության նոր չափորոշչի կիրառմանը, ավարտական՝ 9-րդ եւ 12-րդ դասարաններում քննությունների անցկացման ձեւաչափերի պահպանմանը, փոփոխմանը եւ վերանայմանը, ավարտական փաստաթղթերի, մեդալների, գովասանագրերի տրամադրմանը, ինչպես նաեւ հանրակրթության նոր չափորոշչով նախատեսված գնահատման նոր կարգին:

*«Հանրակրթության նոր չափորոշչի կիրառման տեսանկյունից բավականին առաջընթաց կա: Չափորոշչով նախատեսվում է էապես բարձրացնել դպրոցների մանկավարժական ինքնավարությունը, ուսումնական գործընթացը դարձնել առավել երեխայակենտրոն, իրականացնել բեռնաթափում: Մենք հրաժարվել ենք անբավարար գնահատման շեմից: Կրտսեր դասարաններում միավորային գնահատումը փոխարինել ենք ոչ միավորային եւ ձեւավորող գնահատմամբ:*

*Չափորոշչով սահմանված են նաեւ ԲՏԵՄ բնագավառում ուսուցման որակի աճը, հայագիտական առարկաների արդյունավետության բարձրացումը եւ այլ առաջնահերթություններ: Պարտադիր են դառնում նախագծային ուսուցումը, մասնագիտական կողմնորոշման ակումբները, առողջ ապրելակերպի խմբակները»,-* մանրամասնել է Ժաննա Անդրեասյանը:

Անդրադարձ է եղել նաեւ ուսուցիչների կամավոր ատեստավորման ծրագրին:

Փոխնախարարի խոսքով՝ այս տարի կամավոր ատեստավորմանը մասնակցելու հայտ է ներկայացրել շուրջ 4000 ուսուցիչ. *«Մենք քննարկել ենք կամավոր ատեստավորման փորձնական փուլում արձանագրված խնդիրները, որոնք անպայման հաշվի կառնվեն այս սեպտեմբերին կամավոր ատեստավորման գործընթացի կազմակերպման ժամանակ»:*

Ժ. Անդրեասյանը նաեւ հավելել է, որ վերանայվել է ուսուցիչների վերապատրաստման քաղաքականությունը. պարտադիր ատեստավորման եւ ուսուցչի որակավորման տարակարգերի տրամադրման նոր մոտեցումներ են որդեգրվել, որոնք ենթադրում են ուսուցչի մասնագիտական զարգացման եւ աշխատավարձային քաղաքականության փոխկապակցված մեխանիզմներ:

Նախարարի տեղակալն անդրադարձել է նաեւ նախադպրոցական կրթության մասին նոր օրենքին, որով սահմանվում է նախադպրոցական կրթության ոլորտում նույնպես անցնել համընդհանուր ներառման կրթության համակարգին, որը կներդրվի փուլերով:

Սյունիքի, Լոռու, Տավուշի մարզերում եւ Երեւան քաղաքում նախադպրոցական կրթության ոլորտում համընդհանուր ներառական կրթության համակարգը կներդրվի 2022 թ. սեպտեմբերից:

Այդ ուղղությամբ իրականացված աշխատանքներից, ըստ փոխնախարարի, կարեւոր է հատկապես նախադպրոցական հաստատությունների՝ մեկ սանի հաշվարկով ֆինանսավորման կարգը: Ըստ այդմ՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) երեխաները նախադպրոցական կրթություն կստանան պետական ֆինանսավորմամբ:

*«Նախադպրոցական հաստատությունների գերակշիռ մասը համայնքային ենթակայության կազմակերպություններ են, բայց պետությունը պետք է աջակցի ԿԱՊԿՈՒ երեխաների՝ վաղ տարիքից ներառմանը, քանի որ, ըստ վերլուծությունների, հիմնական խնդիրները ֆինանսավորման հետ են կապված: Պետական ֆինանսավորումը թույլ կտա նախադպրոցական հաստատություններում ներգրավել համապատասխան մասնագետների, ապահովել հարմարեցված միջավայր»,-* նշել է Ժաննա Անդրեասյանը՝ հավելելով, որ միաժամանակ համապատասխան գործիքակազմեր են մշակվել մասնագիտացված կառույցների հզորացման համար:

Խորհրդակցության ընթացքում ոլորտի մասնագետները բուռն քննարկումներ են ծավալել բարձրաձայնված թեմաների շուրջ, հնչել են առկա խնդիրների լուծման առաջարկություններ ու դիտողություններ:

Ամփոփելով խորհրդակցությունը՝ Ժաննա Անդրեասյանն ընդգծել է, որ առաջարկվող փոփոխությունները, լուծումներն ու լրացումները թույլ կտան մեծացնել համակարգի գործառնության արդյունավետությունը եւ խրախուսել կրթության զարգացման հնարավորությունները:

*«Հանրակրթության ոլորտի բարեփոխումները»* խորագրով արտագնա խորհրդակցության կազմակերպումն իրականացվել է՝ Միջազգային հանրապետական ինստիտուտի աջակցությամբ եւ ԱՄՆՄԶԳ-ի ֆինանսավորմամբ:

## Հրապարակվել են կամավոր ատեստավորման ժամանակացույցերը՝ ըստ առարկաների

Գնահատման եւ թեստավորման կենտրոնը հրապարակել է 2022 թ. ուսուցիչների կամավոր ատեստավորման քննական թեստերի ուղեցույցները՝ ըստ առարկաների: Ուղեցույցները հասանելի են ԿԳՄՍՆ եւ ԳԹԿ կայքերում:

Բուն ատեստավորման՝ առարկայական գիտելիքների ստուգման գործընթացը տեղի կունենա սեպտեմբերին:

Կամավոր ատեստավորման փորձնական ծրագրին 2022 թ. մասնակցելու հայտ է ներկայացրել շուրջ 4000 ուսուցիչ: Աշխատավարձերի 30-50 տոկոս բարձրացումը կկիրառվի հոկտեմբերից՝ ըստ արդյունքների:

2022 թվականին ատեստավորումն իրականացվում է 5-12-րդ դասարաններում բոլոր առարկաները դասավանդող ուսուցիչների համար: Ատեստավորումը, ըստ առարկաների, իրականացվում է գրավոր՝ թեստային եւ ոչ թեստային առաջադրանքների միջոցով:

Կամավոր ատեստավորման քննությունների ժամանակացույցը կհրապարակվի առաջիկայում:

Գրականագիտական

# Եղիշե Չարենցի կյանքն ու ժամանակը. 1919 թվական

*սկիզբը՝ նախորդ համարում*

Հոկտեմբերի 13-ին Երեւան էր ժամանել Պողոս Նուբարի պատվիրակությունը, որի կազմում էր նաեւ Վահան Թեքեյանը, ով եւս մասնակցում է երեկոյին: Թեքեյանն իջեւանել էր *«Օրիանտ»* հյուրանոցում, Հայաստանում մնացել է մինչեւ նոյեմբերի վերջը (*«Հայաստանի ձայն», թիվ 7, 19 հոկտեմբեր»*): *«Հայաստանի ձայն»*-ը տպագրում է Մահարու *«Այգեկութ»* բանաստեղծությունը *«Բանաստեղծ բարեկամիս՝ Վահան Թեքեյանին»* ուղերձով (թիվ 7, 19 հոկտեմբեր):

Չարենցն այդ գրական միջոցառմանը ներկա չի եղել եւ այդ մասին տեղեկացել է մամուլից: Այդ կապակցությամբ 1922-ին *«Չարենց-նամե»*-ում գրում է.

*էլ ինչո՞ւ ծիծաղեր հոգիս,*
*Երբ Նիկոլ Աղբալյանը մի օր*
*Սարսելով դահլիճն ու ֆոյեն–*
*Ավետեց ամբողջ աշխարքին,*
*Որ ծնվել է մեծ մի պոետ…*

*Որ ծնվել է երգիչ մի վառ,*
*Ու բերել է երգեր հրե–*
*Ցնծա՛, Նաիրյան աշխարհ,–*
*Ցնծա՛… Եղիշե Չարենց…*

(Ե. Չարենց, *«Ամբողջական գործը»*, 1955, Բեյրութ, հ. Ա., էջ 424):

Աղբալյանի հիշողություններից պարզվում է, որ Չարենցի *«Երեք երգ Տխրադալուկ Աղջկան»* եւ *«Դանթեական առասպել»* գրքերին 1917-ին ծանոթացել է Բաքվի *«Արեւ»* թերթի խմբագրատանը: Նրան հրավիրել էին մի հավաքույթում բանախոսելու, բայց դեռ ժամանակ կար: Ժամանակն անցկացնելու համար ծանոթանում է պատուհանի գոգին լցված հայերեն, ռուսերեն գրքույկներին, որոնց մեջ էին նաեւ Չարենցի հրատարակությունները. *«Վերնագրերը ուշագրավ էին: Տեսա մի նոր մարդ, նոր նյութ, նոր վերաբերում եւ վարժ տաղաչափություն: Մի տաղանդավոր սկսնակ: <…>: Վ. Տերյանի հետքով մի նոր բանաստեղծ էր ծագում գրականության հորիզոնից»:*

Որոշում է առաջին իսկ առիթով անդրադառնալ դրանց, բայց ժամանակները խառն էին: Հաջորդել է դասախոսությունը *«խուռն բազմության ներկայության: Նոր բանաստեղծի անունն ընկավ ամենքի բերանը <…>, եւ Չարենցը դարձավ մի անուն»* (Ն. Աղբալյան, Եղիշե Չարենցն ու ես (նյութ հայ գրականության համար).- *«Ակոս»*, 1945, Զ. գիրք, էջ 330-331; Եղիշե Չարենցն ու ես.- *«Գրական-քննադատական երկեր»*, Բեյրութ, 1959, էջ 329-330; *«Չարենցի հետ: Հուշեր»*, 1997, էջ 61-62):

Ըստ Զորյանի՝ դասախոսությունից մի քանի օր հետո Չարենցն արդեն Երեւանում էր եւ ներկայանում է Աղբալյանին: Աշխատանքի նշանակվելուց հետո նրանց միջեւ տեղի է ունենում այսպիսի խոսակցություն.

*«–Ի՞նչ պիտի անեմ,– հարցնում է Չարենցը…*

*– Կնստես եւ կգրես ինչ կարող ես:*

*– Ես գործի մասին եմ հարցնում, պ. Աղբալյան:*

*– Գործը կանեն անողները»:*

Չարենցը Երեւան է եկել 1920-ի հունվարի 26-ին եւ ապրել է Կոնդի կիսամութ մի փոքրիկ ներքնահարկում՝ մի մահճակալ, մի սեղան եւ երկու աթոռ:

Աղբալյանի զեկուցումից հետո Չարենցն ուներ պատրաստի երկու ախոյան՝ հանձինս ՀՅԴ Երեւանի կոմիտեի քարտուղար ու գրական ընկերության փոխնախագահ Վահան Խորենիի եւ հատկապես Ավետիս Ահարոնյանի որդու, հանրապետության դատախազ Վարդգես Ահարոնյանի, ով Արմենուհի Տիգրանյանի ամուսինն էր: Վարդգես Ահարոնյանի հետ լարվածությունն ավելանում ու խորանում է Չարենցի հոգեխռով տարվածությամբ Արմենուհի Տիգրանյանով: Խորացել է նաեւ Խորենի-Չարենց թշնամանքը. խորհրդայնացումից հետո մի երեկույթի ժամանակ, որտեղ եղել է նաեւ Արփենիկը, արվեստի կոմիսար Չարենցը հանել է մաուզեր ատրճանակը եւ կրակել պատին փակցված Վահան Խորենիի նկարին (տես՝ *«Չարենցի հետ: Հուշեր»*, 1997, էջ 216):

Նշված երեկոյին Թեքեյանի ելույթից հետո Արմենուհի Տիգրանյանը արտասանել է իր բանաստեղծություններից մեկը:

Մամուլի արձագանքներից. *«Դասախոսը շատ հիացմունքով խոսեցավ նոր բանաստեղծի մասին, դրվատեց անոր բանաստեղծական իսկական արժանիքն ու տաղանդը, նորագույն բանաստեղծների շարքի մեջ ամենաառաջնագույն տեղը տվավ անոր: Տերյանեն վերջ Չարենցն է, ըսավ, մեր իրականության մեջ ամենաուժեղ նոր եւ ինքնատիպ բանաստեղծը…»* (*«Ժողովուրդ»*, 1919, թիվ 116, 22 հոկտեմբեր):

*«19 թվին հանդես եկավ մի այլ քնարերգակ՝ Եղիշե Չարենց: Մեր ականավոր քննադատ Ն. Աղբալյան մի հմտալից վերլուծությամբ դասեց նրան հայ գրական ընտանիքի մեջ եւ այն էլ բավական պատվավոր տեղ տալով…»* (*«Յառաջ»*, 1920, թիվ 39):

Ներկա է եղել նաեւ Մահարին (տես՝ *«Հուշեր Եղիշե Չարենցի մասին»*, 1986, էջ 116): Մահարին այս շրջանակի մեջ էր եւ օրեր անց մասնակցել է Թեքեյանի պատվին Նորքում կազմակերպված խնջույքին:

Աղբալյանի զեկուցմանը ներկա է եղել Կարինե Քոթանջյանը Շավարշ Բասենցյանի հետ, ով, ըստ Քոթանջյանի, հոր հոգեորդին էր, այլ կերպ՝ իր խորթ եղբայրը: Զեկուցողն ասում է, որ չգիտի՝ գրողը ո՞ղջ է թե մեռած եւ ենթադրում է, որ պետք է լինի 40 տարեկան: Զեկուցումից հետո ելույթ է ունենում Քոթանջյանը, ասում բանաստեղծի տարիքը եւ աշխատավայրը: Հաջորդ օրն էլ հեռագրում է Չարենցին եւ կանչում Երեւան: Ըստ նրա՝ մի քանի օրից Չարենցը Երեւանում էր, բայց Չարենցը Երեւանում էր 1920-ի հունվարի 26-ին:

